

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 9-րդ կետ.

«9) «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետում «հայտարարատու պաշտոնատար անձանց» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց» բառերը,

2) լրացնել նոր՝ 27-29-րդ կետեր.

«27) ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը.

28) քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործեր.

29) իրականացնում է սույն օրենքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված այլ լիազորություններ:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ գլխի վերնագրում «**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**» բառից հետո լրացնել «, **ՍՏՈՒԳՈՒՄԸ**» բառը:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասում՝ «հայտարարատու պաշտոնատար անձի» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված՝ կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձի» բառերը:

Հոդված 5. Օրենքը լրացնել նոր՝ 40.1-ին հոդվածով.

«Հոդված 40.1. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը

1. Հանձնաժողովը ստուգում է կուսակցության կողմից ներկայացված տարեկան հաշվետվության համապատասխանատվությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին:

2. Եթե կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքում Հանձնաժողովը պարզում է, որ հաշվետվության մեջ առկա են սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, կուսակցությանը տրամադրում է նվազագույնը 10-օրյա, առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

3. Հաշվետվության հավաստիությունը ստուգելու նպատակով Հանձնաժողովի պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ կուսակցության բանկային մուտքերի և ելքերի վերաբերյալ, ներկայացնել հաշվապահական հաշվառման և ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, ներառյալ՝ բանկային ավանդի, վարկային, գույքի առուվաճառքի, վարձակալության պայմանագրերը:

4. Հաշվետվության ստուգման ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) կուսակցության հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված Կենտրոնական ղեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական

գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:

5. Հաշվետվության ստուգման նպատակով Հանձնաժողովն իրավասու է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու նպատակով Կենտրոնական բանկին ուղղված հարցման միջոցով պահանջել և ստանալ հաշվետվություն ներկայացնելու պարտականություն ունեցող կուսակցության հաշիվների առկայության, հաշվի համախառն մուտքի և համախառն ելքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև բանկային պահատուփերի առկայության վերաբերյալ տվյալներ՝ հարցման մեջ նշելով կուսակցության տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Սույն մասում նշված տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հանձնաժողովի համատեղ իրավական ակտով:

6. Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է կուսակցությունից պահանջելու ներկայացնել լրացուցիչ նյութեր:

7. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը ստուգելիս Հանձնաժողովը կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի և տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

8. Հանձնաժողովը կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում իրականացնում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 10-13-րդ մասերով նախատեսված լիազորությունները:

9. Կուսակցության կողմից Հանձնաժողովի սահմանած ժամկետում հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին չհիմնավորվելու և հաշվետվության ստուգման արդյունքում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

10. Առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը գործի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն:

11. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Քրեական գործի հարուցումը մերժելու, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը, իսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռն ստանալու դեպքում նույն ժամկետում կարճում է վարույթը:

12. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան որոշման պատճենը:

13. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը, որոնց հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, իրականացվում է սույն օրենքով սահմանված՝ աուդիտորական եզրակացությունը ստանալուց հետո:

14. Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացվում է աուդիտորական եզրակացությունը ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 15-ը»:

Հոդված 6. Օրենքը լրացնել նոր՝ 40.2-րդ հոդվածով.

«Հոդված 40.2. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը

1. Հանձնաժողովը կազմակերպում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը:

2. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից և իրականացվում Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից:

3. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով բաց մրցույթն անցկացվում է կուսակցության կողմից աուդիտորների ընտրութան նպատակով հայտարարվող մրցույթի համար անհրաժեշտ տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրելուց հետո երկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:

4. Բաց մրցույթի արդյունքում Հանձնաժողովը յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի նպատակով ընտրում է առավելագույնը երեք աուդիտորական կազմակերպությունների, որոնց միջև վերջնական ընտրությունն իրականացվում է հրապարակային վիճակահանության միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցել և ընտրվել է միայն մեկ աուդիտորական կազմակերպություն:

5. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանում է Հանձնաժողովը: Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը պետք է հնարավորինս երաշխավորի մեկ կուսակցության հաշվետվության աուդիտի իրականացման համար մի քանի աուդիտորական կազմակերպությունների մասնակցության հնարավորությունը՝ ապահովելով ընտրված աուդիտորական կազմակերպությունների միջև հրապարակային վիճակահանությունը»:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ:

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքը ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ստեղծվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով:

3. Սույն օրենքը ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից ներկայացվող՝ գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի, պաշտոնը ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի ձևանմուշները:

4. Սույն օրենքը ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածին և սույն օրենքին համապատասխան, հաստատում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները:

5. Սույն օրենքը ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցությունների տարեկան հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը:

6. Սույն օրենքը ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվող՝ 40.1-ին հոդվածի 4-րդ և 5-րդ մասերից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2020 թվականի հունիսի 12-ի 04-Ն համատեղ որոշման մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆՆԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասում՝

~~1) 2-րդ կետում «հայտարարագրման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի,» բառերը,~~

~~2) լրացնել նոր՝ 9-րդ կետ.~~

«9) «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների, ~~դրամաց~~ աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ), ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը, ~~կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ տեղեկատվության ստուգումը.:~~»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում ~~է~~

1) 3-րդ կետում «հայտարարատու պաշտոնատար անձանց» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց» բառերը,

2) լրացնել նոր՝ 27-29-րդ կետերով.

«27) ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և

տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը, ~~ճշտությունը~~ — և ~~հավաստիությունը~~,

~~28) ստուգում է կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ տեղեկատվությունը~~,

289) քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործեր,

2930) իրականացնում է սույն օրենքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված այլ լիազորություններ»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ գլխի վերնագրում «ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ» բառից հետո լրացնել «ՆՍՈՒԳՈՒՄԸ» բառը:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասում՝ «հայտարարատու պաշտոնատար անձի» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված՝ կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձի» բառերը:

~~«իդ ընտանիքի կազմի մեջ մտնող անձի» բառերից հետո լրացնել «կամ «Կուսակցությունների մասին» օրենքով սահմանված՝ կուսակցության ղեկավար մարմնի անդամի» բառերը~~:

Հոդված 5. Օրենքը լրացնել նոր՝ 40.1-ին հոդվածով.

«Հոդված 40.1. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը

12. Հանձնաժողովը ստուգում է կուսակցության կողմից ներկայացված տարեկան հաշվետվության համապատասխանատվությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին:

13. Եթե կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքում Հանձնաժողովը պարզում է, որ հաշվետվության մեջ առկա են սխալ կամ ոչ ամբողջական — ~~անճշտություններ կամ ոչ լիարժեք~~ տվյալներ, կուսակցությանը տրամադրում է նվազագույնը 10-օրյա, առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ ~~ողջամիտ ժամկետ՝~~ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները դրանք շտկելու նպատակով:

14. Հաշվետվության հավաստիությունը ստուգելու նպատակով Հանձնաժողովի պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ կուսակցության ~~դրամարկղային~~ — բանկային մուտքերի և ելքերի վերաբերյալ, ներկայացնել

~~Գախնական~~— հաշվապահական հաշվառման և ներկայացրած հաշվետվության հավաստիությունն ստուգելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, ներառյալ՝ բանկային ավանդի, վարկային, գույքի առուվաճառքի, վարձակալության պայմանագրերը:

15. Հաշվետվության ստուգման ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) կուսակցության հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ [բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ](#), «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կապաված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:

16. Հաշվետվության ստուգման նպատակով Հանձնաժողովն իրավասու է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու նպատակով [Կենտրոնական բանկին](#) ուղղված հարցման միջոցով պահանջել և ստանալ հաշվետվություն ներկայացնելու պարտականություն ունեցող կուսակցության հաշիվների առկայության, հաշվի [համախառն մուտքի և համախառն ելքի մնացորդի և հաշվի շարժի](#) վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև բանկային պահատուկների [առկայության ուժ-պահվող գույքի](#) վերաբերյալ տվյալներ՝ հարցման մեջ նշելով կուսակցության տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Սույն մասում նշված տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հանձնաժողովի համատեղ իրավական ակտով:

[17. Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է կուսակցությունից պահանջելու ներկայացնել լրացուցիչ նյութեր:](#)

[18. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը ստուգելիս Հանձնաժողովը կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի և տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ](#)

տեղեկատվությունը ստանում է իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

19. Հանձնաժողովը կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում իրականացնում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 10-13-րդ մասերով նախատեսված լիազորությունները:

20. Կուսակցության կողմից Հանձնաժողովի ~~կողմից~~ սահմանած ժամկետում հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին չհիմնավորվելու և հաշվետվության ստուգման արդյունքում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը հարուցում կարող է հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

~~17. —:~~

~~18. — Հանձնաժողովը կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում իրականացնում է «Կուսակցությունների մասին» օրենքի օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները:~~

19-21. Առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը գործի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն:

20-22. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Քրեական գործի հարուցումը մերժելու, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը, իսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռն ստանալու դեպքում նույն ժամկետում կարճում է վարույթը:

120. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան որոշման պատճենը»:

13. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը, որոնց հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, իրականացվում է սույն օրենքով սահմանված՝ աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո:

14. Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացվում է աուդիտորական եզրակացությունը ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 15-ը»:

Հոդված 6. Օրենքը լրացնել նոր՝ 40.2-րդ հոդվածով.

«Հոդված 40.2. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը

1. Հանձնաժողովը կազմակերպում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը:

2. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից և իրականացվում Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ~~հայտարարված գնումների միջոցով~~ ընտրված ~~առնվազն երեք~~ աուդիտորական կազմակերպությունների կողմից:

3. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով բաց մրցույթն անցկացվում է կուսակցության կողմից աուդիտորների ընտրության նպատակով հայտարարվող մրցույթի համար անհրաժեշտ տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրելուց հետո երկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:

4. Բաց մրցույթի արդյունքում Հանձնաժողովը յուրաքանչյուր կուսակցության հաշվետվության աուդիտի նպատակով ընտրում է առավելագույնը երեք աուդիտորական կազմակերպությունների, որոնց միջև վերջնական ընտրությունն իրականացվում է հրապարակային վիճակահանության միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցել և ընտրվել է միայն մեկ աուդիտորական կազմակերպություն:

~~Աուդիտի ենթակա կուսակցությունների բաշխումը մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների միջև իրականացվում է վիճակահանությամբ, որին կարող են ներկա գտնվել աուդիտի ենթարկվող կուսակցությունները:~~

53. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանում է Հանձնաժողովը: Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը պետք է հնարավորինս երաշխավորի մեկ կուսակցության հաշվետվության աուդիտի իրականացման համար մի քանի աուդիտորական կազմակերպությունների մասնակցության հնարավորությունը՝ ապահովելով ընտրված աուդիտորական կազմակերպությունների միջև հրապարակային վիճակահանությունը»:

~~Հոդված 7. Օրենսգիրքը լրացնել 40.3. որ հոդվածով.~~

~~«Հոդված 40.3. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ տեղեկատվության ստուգումը~~

~~1. Կուսակցությունը յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող փետրվարի 15-ից ոչ ուշ, Հանձնաժողովին տեղեկատվություն է ներկայացնում նախորդ տարում Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի, այդ կազմում անդամների փոփոխությունների և յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թվի վերաբերյալ:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով չներկայացվելու դեպքում, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքում օրենքով սահմանված՝ տարբեր սեռի ներկայացուցիչների համամասնության խախտում բացահայտելու դեպքում կուսակցության պետական ֆինանսավորումը կասեցվում է: Պետական ֆինանսավորումը վերսկսվում է մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում տարբեր սեռի ներկայացուցիչների համամասնությունը պահպանված լինելու կամ այն վերականգնելու վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովին ներկայացվելուց և այն ստուգվելուց հետո՝ հաջորդ եռամսյակից:~~

~~3. Եթե տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ նախորդ տարում Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում տարբեր սեռի ներկայացուցիչների համամասնությունը խախտված է եղել երեք ամիս և ավելի ժամկետով, որի մասին կուսակցությունը Հանձնաժողովին տեղեկատվություն չի ներկայացրել, կուսակցության պետական ֆինանսավորումը կասեցվում է խախտման բացահայտմանը հաջորդող եռամսյակի համար:~~

~~4. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում «Կուսակցությունների մասին» օրենքով սահմանված՝ տարբեր սեռի ներկայացուցիչների համամասնությունը խախտվելու դեպքում կուսակցությունը~~

~~տասնօրյա ժամկետում Հանձնաժողովին տեղեկատվություն է ներկայացնում այդ համամասնության խախտման, դրա պատճառների և այն վերականգնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցների և ժամկետի մասին:~~

~~5. Տարբեր սեռի ներկայացուցիչների համամասնության խախտման օրվանից եռամսյա ժամկետում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում այդ համամասնությունը վերականգնելու վերաբերյալ կուսակցության կողմից Հանձնաժողովին բավարար ապացույց չներկայացվելու դեպքում կուսակցության պետական ֆինանսավորումը կասեցվում է մինչև կասեցման համար հինք հանդիացող խախտումները վերացնելը:~~

~~6. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում տարբեր սեռի ներկայացուցիչների թվի համամասնության խախտման վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցում է Կառավարություն՝ պետական ֆինանսավորումը կասեցնելու նպատակով:~~

~~7. Հանձնաժողովը սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը ստուգելու նպատակով իրավունք ունի կուսակցությունից պահանջելու տեղեկատվության իսկությունը հավաստող փաստաթղթեր և այլ տեղեկություններ:~~

~~8. Սույն օրենքով և «Կուսակցությունների մասին» օրենքի սահմանած պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը կարող է հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:~~

~~9. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևը սահմանում է Հանձնաժողովը:~~

Հոդված 78. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ:

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. ~~Մինչև Սույն օրենքի ուժի մեջ մտնելը~~ [Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը](#) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ստեղծվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին «Կուսակցությունների մասին» [սահմանադրական](#) օրենքով վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով:

3. ~~Մինչև Սույն օրենքի ուժի մեջ մտնելը~~ [Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը](#) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցության ղեկավար

մարմնի անդամների կողմից ներկայացվող՝ գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի, պաշտոնը ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի ձևանմուշները:

4. ~~Մինչև ս~~Սույն օրենքի ~~ուժի մեջ մտնել~~ Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածին՝ ~~4-րդ մասին~~ և սույն օրենքին համապատասխան, հաստատում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները:

5. ~~Մինչև ս~~Սույն օրենքի ~~ուժի մեջ մտնել~~ Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցությունների տարեկան ~~հաշվետվությունների հրապարակման և ներկայացման կարգը, ինչպես նաև~~ հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը:

~~6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևը:~~

6. Սույն օրենքը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվող՝ 40.1-ին հոդվածի 4-րդ և 5-րդ մասերից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2020 թվականի հունիսի 12-ի 04-Ն համատեղ որոշման մեջ: